ընծայել Թիւրքիայի դարաւոր խարդախ քաղաքականութեան և յուսով ու հաւատով բարեփոխութիւն սպասել այդ բարբարոս ու մոլեռանդ ազգից։ «Մեղուի» պ. խմբագիրը այնքան համոզված է Թիւրքիայի արդարադատութեան և եղբայրասիրութեան զգացմունքներին, որ յոդուածի վերջում բացագանչում է. «անդուլ ինքն ևս (Թիւրքիան), խմենալով, որ այդ շարժումը լոկ շիտի է սովի պատճառով և ոչ թէ ապստամբութեան ցոյցեր, պաշտպան կը հանդիսանայ (ինչու մ.նդև այսօր չ. հանդիսանում) հայերի արդարացի դատերին և շուտով կը տայ նրանց այն, ինչ որ իրաւամբ նրանց կը պատկանի»—(ինչ կը պատկանի....) Հիմայ տեսնենք, որքան արդարացի են «Մեղուի» պ. խմբագրի կարծիքները և յուսալիութիւնը։—Վերջին օրերի հեռագրերը հաղորդում են, որ ընտաց խնդիրը պէտք է հնայ անորոշ, իսկ Զէյնօզօրիային կարելի է բաւարարութիւն տայ Թիւրքիան միայն Դուլցիգնոն տալով—ասելի ոչինչ։ Իսկ Եւրոպայի դեսպանները, երևի թէ, ճանձրանալով Թիւրքիայի սիստեմատիկական խարեպայութիւններից, ձեռքերը պէտք է լուան և չեռու քաշվեն։—Ամարտկոս, Թիւրքիայի յանտարութիւնը կախումն ունի եւրոպական պետութիւնների թոյլ և դանդաղ գործունէութիւնից. մանաւանդ որ ոչ ոք նրանց, ինչպէս երևում է, ոչ կամք և ոչ ցանկութիւն ունի մեծ գումարներ և զորք գռնել թէ յունացոց, թէ Զէյնօզօրիայի և թէ մանաւանդ տաճկաց հայերի համար։ Այս բանը Թիւրքիան շատ լաւ գիտէ։ Արդէն Անգլիայի պարլամենտում շատ խիստ հարցեր են առաջարկվում նախարարներին. «էջը լինի թէ նրանք մտադիր են գործադրել դեր խաղալ տրեբեսան խնդրի մէջ—մի անհնազանդ ձեռնարկութիւն, որ անմեղին ցանկալի չէր այժմ առանց այն ևս շատ կարևոր խնդիրներով պարապած—անպլիացոց և որբ լայի վնասից, ոչինչ օգուտ չէ խոստանում....» Պրանտական լրագրիները էլ անմեղն օր խորհուրդ են տալիս իրանց տեսութիւնները խոհեմ վարվել և հեռու մնալ անմիջական ազդեցութիւնից արեւելեան խնդրի վրա։ Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային և Աւստրիային, անկասկած է ենթադրել, որ նրանք այնքան մարդասէր ու անշահասէր լինեին, որ իրանց սեպհական միջոցներով վերջ դնէին սրեւելեան խնդրին՝ յօգուտ Թիւրքիայի շպտակակազմութիւններին։ Այս անմիխիթար իրողութիւնների վրա ուշադրութիւն այն տխուր լուրը, որ այս օրերս հաղորդեցին եւրօպական թերթերը, թէ թուրքական Հայաստանի քրդերի մոլեռանդ ցեղապետները դաշնակցութիւն են կազմում միմեանց հետ։ Դէպ նրա պատճառով է այդ դաշնակցութիւնը և որոնց համար։—Կարծենք շատ պարզ է. նոյնպէս հասկանալի է, թէ որ կողմից է դրված ու գրգռված այդ դաշնակցութիւն խնդիրը և ինչ սարսափելի հետևանքներ կարող է նա ունենալ Թիւրքիայի հայերի վերաբերութեամբ. նեմ վերջինը՝ լսելով «Մեղուի» օրորին ու նանիկին, խոհեմ լինեն, հանդիստ պառկին և շարունակեն իրանց դարաւոր քունը....

Ահա ինչպէս մտայլ է քաղաքական հորիզոնը և ինչ թուղթ ամպեր պատել, ծածկել են Հայաստանի ապագան։ Զորս կողմից արգելքներ, փոսոնդներ, սով ու հիւանդութիւն, անտէր ու խարդախ կառավարութիւն, եւրօպական պետութիւնների անտարբերութիւն, քրդերի ու չերքէզների արշաւանք.... և սրանից յետոյ, երբ փայլում է մի կայծ ճեղված և սարեցած ժողովրդի ինքնաճանաչութեան, երբ որ նայի դարեր համբերութիւնը առաջում է և նա զէնքի է դիմում իր անէծ, իր տուն ու տեղը պաշտպանելու, բանակալութիւնն և բարբարոսութեան ընդդիմադրելու—այն ժամանակ սատ ենք, փոխանակ քաջալերելու, փոխանակ սիրտ տալու և օգնութիւն հասցնելու, գտնվում են անձինք (ցաւ է ասել, որ այդ անձինքը լրագրութեան գլուխ են համարվում, ուրեմն և հեղինակութեամբ մարդիկ), որոնք, ով գիտէ ինչ ըզգացմունքներից դրդված, սառը ջուր են ածում կրակի վրա, կարծելով մեծ բարիք անել—խաղաղութիւն և խոհեմ համբերութիւն են քարոզում ապստամբված հայ ժողովրդին—այն ևս այնպիսի մի ժամանակ, որ ընդհանուր կարծիքով, ամենայարմարն է և ամենից բարեպատեհ....

«Soyez rezolua de ne zarvir pluz, ասում է երևելի ֆրանսիացի Էմիլեն դը լա Բէտի, et vouz voila libres.»—արդարացի և ընդհանուր պատմութեան անթիւ ու անհամար անցքերով վերաստուգված ճշմարտութիւն!—Մի ազգ, մի ծնրձված ժողովուրդ այն ժամանակ միայն կարող է լինել ազատ, երբ որ նա ինքն կը վճռէ չը լինել այլ ևս ստրուկ. բայց «Մեղուի» կարծիքով միայն խոհեմութեամբ և համբերութեամբ ստրուկ ժողովուրդը կարող է հանել ազատութիւն.—այսինքն միշտ ստրուկ մնալով կարելի է վերջապէս ազատ լինել?!

Մնում է մեզ միայն ցաւել, որ յիշեալ լրագրի պ. խմբագիրը՝ մինչև այսօր չէ կարողացել ըմբռնել վերևում բերած տարբերութիւնը....

Բ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

29 օգոստոսի

«Մշակի» № 145 մէջ տպած էր մի յոդուած, որի թէ քննադատութիւն (կրիտիկա) «Ոգ» ամսագրի № VI—VII մէջ տպած իմ յոդուածի վրա։ Կրիտիկա Ա. Ամերիսեանցը իր յոդուածը սկսում է այսպէս.

«Կարծես թէ աշխարհս մէջ մէկ հատիկ ազգ կայ որ իր ժամանակից ու օրուայ խնդիրները թողած, սարեր, ձորեր է ընկնում և իրան համար անմարսելի նիւթեր հնարում և ծամում, և դա էլ մենք հայերս ենք» (?!)։

Իսկ 15 տողից յետոյ, նկատեցէք՝ միայն 15 տողից յետոյ, նա շարունակում է։

«Նիւթը շատ հետաքրքրական է և ժամանակակից... և այն։»

Այս աչքին դարձոց, այս աշխարհ հակասութիւնը, որը ի հարկէ մեծ ապացոյց չէ ներկայի տրամաբանութեան (լոգիկայի) առողջ գրութեան, բաւական կը լինէր ցոյց տալու համար թէ պ. Ամերիսեանցը ինչ աչքով է նայում քննադատութիւն (կրիտիկա) գրելու վրա և ինչ սիստեմա ունի առհասարակ յոդուածներ շարադրելու համար։ Վասն որոյ ես էլ ուզի շատ բան չեմ ասի, այլ կառնեմ միայն մի գլխաւոր կէտի վրա։

Պ. Ամերիսեանեանցը կամենալով ցոյց տալ իմ բանաստեղծը և տպտուտիները, որով ես իբր ասում եմ յիշեալ յոդուածս մէջ թէ՝ հայերի մէջ երբէք և ամենևին չէ եղել բազմակնութիւնը, ինքը ջանք է դնում ապացուցանել դրա շարառանը և իր խօսքին ուզի գիտական կերպարանք և հեղինակութիւն (!) տալու համար, մատնանիշ է անում Ս. Սահակի և Դվինի ժողովի երկու կանոնի վրա, որք իբր թէ արգելում են բազմակնութիւնը, և առանձին կերպով շեշտում է դրան մէջ երկրկին բառի վրա։

Բայց ճշմարիտ ծաղրելի է դառնում մի կանոնագէտ ձևացող կրիտիկոսի գրութիւնը, երբ նա չը հասկանալով մի ամենապարզ բառի ճիշդ նշանակութիւնը՝ կառնում է դրան վրա իր գիտական քննութիւնը։

Նախ պէտք է ճանաչել գէրզի նշանակութիւնը և իմանալ նորա գործածութիւնը և ապա գործ դրնել, ապա թէ՝ այդպիսի գէրզի մէջտ գործածողին է վերաբերում։ Պ. Ամերիսեանեանցը թող մի թերթ ազգասէրներ քաջ բանայ որ և իցէ հայերէն բառարան և գտնել երկրկին բառը և այն ժամանակ կը սորեր թէ ինչ է նշանակում դա։ Բայց գուցէ դժուար լինի այդ նրա համար, վասն որոյ ևս կոչեմ նրան և կասեմ որ՝ երկեաբ, երկաբկին, երկրկին, չէ նշանակում, ինչպէս պ. Ամերիսեանցը կարծում էք, բազմակին, ինչպէս օրինակ մաշտակաբնեին ունի, կամ գոնեա երկուակին մասին ունեցող, այլ երկրորդ կին ունեցող, երկրորդ անգամ ամուսնացած։

Ինչ չէին զանազանութիւն և ինչ աշքին ըստ խմբմնար։

Ցաւալի է որ՝ քրիստոնէական եկեղեցին շատ վաղուց սկսեց արգելել երկրորդ անգամ ամուսնացածին տալ եկեղեցական ատիճաններ։ Այս կանոնը ընդհանուր է բոլոր եկեղեցիների մէջ և ծրագրութեամբ պատկանվում է մինչև այսօր ամեն տեղ որպէս և մեր մէջ։ Ահա այդ իսկ հարցին են վերաբերվում, և ոչ բազմակնութեան, պ. Ամերիսեանցի ցուցած երկուականը—«զի պոռնկորդք և երկրկինք մի եղեն յաստեղեան կղերիկոսութեան», և միայն թէ՝ «երկրկին պաշտօնեայք որոշեալ կացին յեկեղեցական կարգէ և մի վայելեցին ի հաւս եկեղեցոյ», ուստի միայն թէպէտ շատ պարզ է, բայց պարզնը չէ նայացել։

Սորանից յետոյ մեզի աւելորդ չէր լինի խօսել պ. Ամերիսեանեանցի մեացած անտեղի դատողութիւնների վրա։

Վ.ահան Ծ. Վ. Բաստամեան

—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ԹԼՄԻՐԻՆԱՆ-ՇՈՒՐԱՅԻՑ, որ այս տարի վիճակաւոր առաջնորդի հրամանով բացվեցաւ այնտեղ հայոց հոգևոր ծխական դպրոց. դասատուները սկսվեցան օգոստոսի 19-ից։ Դպրոցի կառավարութեան համար ընտրվեցան հոգաբարձուներ։ Դպրոցի բացմանը բարոյապէս նպաստեց Գէորգ քահանայ Փարեմուզեանցը, իսկ նիւթապէս նպաստեց պ. Պետրոս Սարգսեանցը։

—

ԴՈՒՇԵԹԻՑ մեզ գրում են, թէ Ա. Տ. Ց. քահանան, մի քանի միամիտներից վկայական ստանալով, ուզարկից Էջմիածին սենոդը, որ նրան արժանացնեն խաչի։ Տէր հայրը, գրում են, այն քահանան է, որին այս օրերում օտարազգիները հարբեցնելով, հրապարակ պար ածեցին. և համարեա ամենն գնալը անց է կացնում կանանց հասարակութեան մէջ լսոս խոսալով։

—

Մեզ գրում են՝ օգոստոսի 25-ին Վանքի մայր եկեղեցում, մարդիանը վերջացնելուց յետոյ, ԹԻՖԼԻՍԻՆ քահանաներից մի քանիսը դնացին Որմանեանց պ. Դ-ի այդին քէֆի անելու։ Արբանեաստանի տեր հայրերի ուրախութիւնը վերջացաւ հայհոյանքներով և մխիթարեց ծնեցողով։

—

Մեզ հաղորդում են, որ օգոստոսի 2-ից սկսեալ ԹԻՖԼԻՍԻ հայթութիւնները (փունջերը) միաբանված են միմեանց հետ, այլ ևս հայ չեն թողում, պատճառ լինելով տակաւին անբաւականացուցիչ մնալը։ Ժողովուրդը ստիպված է այժմ միայն թեներում թնած հայ գնել, այն ևս մինչև երեկոյ սպասվում է, այնպէս որ, եթէ մէկը ցանկանայ ամբ 9-ից յետոյ հայ գնել, ոչ մի տեղ չէ կարող գտնել։

—

Մեզ գրում են Ղազախի գաւառի ԲԱՄԱՐԼՈՒ գիւղից, թէ մի թուրք բէկ, որին կոչում են Մէհմէտ աղայ, տարից իր փարքին երեխայի հետ գիւղը վերադառնալու. ժամանակ, յանկարծ մի ատաղով յարձակվում է նրա վրա, ասելով, թէ ես պէտք է քեզ սպանեմ։ Աւազակը հրացանը արձակում է, բէկը զարմանում է գետնին։ Նա մնում համարելով, կամենում է հեռանալ, երբ նկատում է, որ բէկը փորձ է փորձում բարձրանալ։ Աւազակը վերադառնում է, այս անգամին կամենում է պարանոցը կտրել։ Այս միջոցին փոքրիկ երեխան գրկում է իր հօրը, յայտնելով, թէ չը պիտի թողնի, որ նրան մատնեն։ Աւազակը, տեսնելով այդ սրբազարժ տեսարանը, թողնում է և հեռանում. Բէկը մնում է կենդանի, որովհետև գնաակը անցել էր նրա հագուստի միջից։

—

Ղազախի ՀԱՄԱՅՈՒՐ գիւղի վանաւոր անոգի մասին յայտնված էր «Մշակի» անցեալ համարների մէջ։ Այժմ այնտեղից գրում են, որ գիւղացիները գտնում են վանաւոր մարմնը աւազակներից սպանված և թաղված վանքի մօտակայքում։ Գիւղից կանչատրել է մի քանի մարդիկ, որոնց վրա կասկածներ կային։

—

Պ. Տիգրան Նաւասարդեանը խնդրում է մեզ յայտնել, թէ արդէն պատրաստ ունի տպագրութեան համար գետնեալ երգոյցների հայերէն թարգմանութիւնները. I. Замѣчательный работникъ, Изложилъ по Смайльсу А. Н. Кавасъ. II. Завалины снѣгомъ. Соч. Франца Гофмана.

—

Մեզ հաղորդում են, թէ օգոստոսի 3-ին քննվեցաւ ՀԱՒԱՅԱՐԻ Զորաբաշի տէր Գէորգ եկեղեցու երեցփոխն պ. Ե. Նազարեանցի վեցամեայ տարին, նոյն եկեղեցու դպրոցի մէջ։ Ներկայ էին ծխական ժողովրդից շատերը, նոյնպէս և կանոնիստորիայի նախանդամ գեր. Մամբրէ վարդապետը։ Հարցի մէջ յայտնվեցան մի քանի անհարելի խարդախութիւններ։

—

Մեզ գրում են Ղազախի գաւառի ԱՂԴԱՆ գիւղից, որ այս ամառ գոդերը մտնելով մի գիւղացու տուն, դուռ են բերում տան երթիկից մի մեղուկ, որի մէջ կային բաւականին փեղեր և վէքսներ։ Նամակագիրը աւելացնում է, թէ Ղազախի գիւղերում առհասարակ շատ են պատահում գողութիւններ, և այդ անկարգութիւնները նա վերաբերում է գիւղական դատաւորների և տանուտէրների անբարեխղճութեանը։

—

Լօռի գաւառի ՕՁՈՒՆ գիւղից մեզ հաղորդում են, որ այդ գիւղը մեկ ամբողջ գաւառի մէջ առաջինն է համարվում, բայց իր չափազանց անկարգութիւններով ամենից ցած տեղն է բռնում։ Ամենն օր համարեա անպակաս են լինում տեսեր, խաղեմիներ կողոպտել, աղջիկներ առևանգել, մի մնանց սպանել, և այլ անվայել գործեր։ Գիշեր անկարգութիւնները նամակագիրը վերաբերում է տանուտէրի թուլութիւնը։ Աւելի վատթար է գիւղի դպրոցի դրութիւնը, Վարժապետները վարձ չը ստանալով, դպրոցը փակում է. կամ հոգաբարձու Տ. Ա. քահանան վարժապետի ուսմանի մասը իր գրպանն է դնում և վարժապետը ստիպված է լինում դադարեցնել իր դասատուութիւնները։

—

ՂԱՍԱԼԻՒ գաւառի գիւղերի մէջ կատարվող աւազակութիւնների, սպանութիւնների մասին անդադար լուրեր են հասնում մեզ։ Լոյս—ցերեկով թուրքերի թարաքամայ կոչված ցեղը հայ գիւղացու անասունները նրա աչքի առջևից քշում տանում է, և երկիւղից ոչ ոք չէ համարձակվում յանդիմանելի հտեից դնալ։ Գիւղացիներից գրում են, որ մի ազգատ հայից թուրքերը չորս եզ խլեցին, տարան. օր չէ անցնում, որ այսպիսի դէպքեր չը պատահին։

—

ԴԻՎԻՃԱՆԻՑ գրում են, որ տեղային հոգևոր դպրոցի մէջ գլխաւոր ուսուցչի պաշտօն ստացաւ Վարաքիրեանի հետագրատան մէջ ծառայող պ. Ա Ս., որի մասին լրագրներում հրատարակվեցաւ, թէ շատ գովութիւններ էր գործում իր ծառայութեան մէջ, հետևաբար դասընկերները ստորներին յայտնելով։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, թէ տեղային թեմական կոնսիստորիայի ծառայողները ընտրված են այնպիսի անբնդունակ անձնիներից, որ ամենևին չեն համապատասխանում իրանց պաշտօնին և շատ անգամ հայոց կոնսիստորիան ծառայութեան առարկայ են դարձնում ստորների առջև։ Նամակագիրը թեմական առաջնորդ Եղիազար եպիսկոպոսի ուշադրութիւնն է հրաւիրում կատարվող անկարգութիւնների վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ *)

—

Պ. ԼԱՊՈՒՇԵՐ բանաստեղծութիւն մը կը սկսի Թիւրքոց համար այնքան խիստ բարուերով, որ արժան չեմք սեսներ թարգմանել իւր խօսքերը։ Ըստ Պ. Լապուշէրի, քանի մը տարի առաջ Պ. Կլատսթոնի բացատրած հեռաքրքրական դրութիւնը զործադրելէ ուրիշ ոչինչ չը կայ եղեր գիտրբիա բարբարելու համար։ Պ. Լապուշէր սապէս կը շարունակէ.—«Եթէ Սրբ Զարդ Տիկնոջ խօսքին նայիմք, տէրութեանց հաւասարական ծանուցագրին հետևանքն ինչ պիտի լինի Սրբ Զ. Տիկնոջ բռնական զորութիւն գործածելու հաւանականութեան ամենարկեց. բայց Թիւրքերը լաւ գիտեն թէ յոյժ տարակուսական է որ մեք մեր կամքն անոնց զործադրել տալու համար զորութիւն գործածենք։ Թէև մեր արդի նախարարութիւնը վերջին նախարարութեան հետ բաղդատմամբ աւելի ուղիղ կերպիս կը գործէ, այսու հանդերձ չեմ կրնար չը ցաւիլ տեսնելով որ ուղղակի մեզ վերաբերութիւն ունեցող գործերու կը միջամտեմք։ Կը յուսամ որ մեք գնալ մարդկային ցեղին ծոն Քրիստոնէ չը պիտի ներկայեմք։ Կը յուսամ որ Աղդիա գինեալ միջամտութիւն չը պիտի ընի իւր տեսութիւններն յառաջ տանելու համար։ Նախարարութիւնն անշուշտ թի նկատ պիտի առնու թէ այդպիսի պատերազմներն ո՞ւրտի ծանր կը նստին Տան և հինգ միլիոն ոսկի վճարել պարտաւորեցանք Աշխատանաց պատերազմին համար։ Կը յուսամ որ մեք պարզապէս պիտի ըսեմք Թրքաց որ եթէ բարեկորոգում չը գործադրեն, զիրենք Ռուսիոյ գրաւալից գիրկերը թողլով գործէ պիտի քաշուիմք։ Արմենիոյ համար մեծ առաւելութիւն կայ Ռուսիոյ քան թէ Թիւրքիոյ հպատակ լինելով։ (Ուշադրութիւն)։ Ես չեմ հաւատար այն պատաւի խօսքերուն թէ

*) Շարունակութիւնը տես № 149. 1526